

659

Ch - 45

891.99

Կ Ա Հ 7
Տ Ե Ր Ա Խ Ա Խ Ա Խ Ա Խ

ԱՐԱՄԱՆԻՒ

ՓՂՈՏ ՃԵՆԱՊԱՐՀԻՆ

1. 2



Բ Ա Գ Ռ Ի
Տուարան, Ն. Երևանցեանի:
1908

26 FEB 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԺԴԱՌԱՋՄԱՆ ՑԱՆՔ



19576-58

80-01

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Երբ տաք դնդակը ձեր սիրալ ծակեց և խոռունկ վէրքից արիւնը ցայտեց, դուք փորսող տալով քարէ բարձի վրայ ձեր հանգիստն առաք:

Երբ սառն քամին լեռան կատարին՝ բուք ու բորանով ձեր կուրծքն էր ծեծում, դուք սրթսըրթալով ձեր մերկ մարմինը ցնցոտիներով պատրսպարեցիք:

Երբ շրջապատուած թշնամիներով պապակւում էիք, այրուում ծարաւից, ուզմի երգերի անզուսպ ժայթքոցով խեղդող ծարաւը հեռու վանեցիք:

Երբ քաղցից նուազած, հողը փորելով խոտի արմատներ էիք ծամծըմում, վառօղի ծուխը եղաւ ձեզ համար փրկիչ մանանայ:

Զեր խոր վէրքերը խնամոտ ձեռքերով ոչ ոք չփաթթեց, արնոտ եղերուած ձեր ճակատներին մայրեր ու քոյրեր դողդոջ շրթունքով, համբոյրներ չդրին:

Գալուններ եկան, դարուններ անցան, և

հեռու, հեռու սիրակէղ սրտեր, մխացող աչքեր
երկար տարիներ ձեր դալուկ դէմքին կարօտ
մնացին:

Այժմ էլ գարուն է.—գարնան նոր բերած
թարմ ծաղիկներից՝ պսակ ձեր շիրմին:

Չեր գաւանանքին, սրբութիւն սրբոց վեհ
գաղափարին, որ զրկանքների, տառապանքների
ծանր օրերում հրեղէն մի սիւն եղաւ ձեզ հա-
մար՝ յարգանք յաւիտեան:

Ոսկեղէն զըշով քանդած, քանդակած՝ պատ-
մութեան զբքում պանծալի կոթող ձեր անուն-
ներին, ձեր յիշատակին:

Եւ անհետ կորած ձեր շիրիմներին, սար ու
ձորերում ցանուցիր եղած ձեր ոսկորներին, ա-
նուշ ընկերներ, ձեր ընկերներից՝ այրող կարօ-
տի ողջոյն ջերմագին:

ԾԱՂԻԿԻ

(Խէջօյի յիշատակին*)

Ես յոզնած ու հալածական՝ կանգ առայ ըլլակի
պագաթը կազմող կանաչաղարդ հարթոցում, որտեղից
չորս կողմս տարածւում էր մի յափշտակող զեղեցկու-
թիւն։ Ամարային մեղմիկ զեփիւնն օրորում էր ինձ և
ես անձնատուր եղած մոայլ մտքերիս՝ պառկեցի խո-
տերի մէջ։

Ինքը բնութիւնը ցըեց մտքերս և ես ընկայ մի
զմայլիկի ինքնամուսացութիւնն մէջ։ Կտրւած առօրեայ
հոգսերից, մոռացած ճնշող իրականութիւնը, ես հան-
գըտանում էի ծոյլ մեղկանքով։ և էութեամբս ձուլե-
լով բնութիւնն եւս, կամաց-կամաց սկսում էի հասկա-
նալ չորս կողմս սլալացող խոտերի լեզուն։ Նրանք եր-
պում էին անհոգ երգեր, հեքիաթներ պատմում կա-
խարդական աշխարհից, իսկ աչքերս յառած երկնակա-
մարին, հաճոյքով ականջ էի գնում նրանց։

Աշխարհն այլ ես գոյութիւն չունէր ինձ համար.
վերացել էի……

Բայց ահա այնտեղ, կապոյտ երկնակամամարում,
ուր հայացքս էի յառել, երեաց մի արծիւ, վեհապանծ

*) Սպահուած 1896թ. Սեպտ. 13-ին Կէմ գիւղի մօտ,

թերը լայն տարածած, կրակու աչքերը դէպի իձն
սեեռած: Վեհ էր արծիւը, հսկայ, զօրաւոր և կուրծքը
զարդարւած կարմիր ժապաւէնով:

Ճախրեց արծիւը լայն պտոյտներով, ապա կա-
մացուկ թերը սեղմեց, ճշաց, դէպի ցած սլացաւ, եկաւ
ինձնից քիչ բարձր կանգ առաւ, առաջւայ նման կրա-
կու աչքերը դէմքիս սեեռած:

Ես վախեցայ և աշխատեցի ծածկւել խոտերում:

Անցաւ մի ըոպէ. ձայն չէր դալիս... Գնաց ար-
ծիւը... Վեր նայեցի:

Ո՞չ, չէր գնացել. ինձնից քիչ բարձր դեռ կանգ-
նած էր նախկին զիրքում, միայն աչքերն այլ ևս չէին
վառուում առաջւայ նման, այլ այնտեղ փայլում էր ինչ
որ խանդաղատանք.

—Բարե, ընկեր—ջան, —ասաց արծիւը.—ինձ չես
ճանաչում:

Զը զիտեմ, զարմացանյ, որ արծիւը խօսեց, թէ
սարսափեցի... Ընկեր... ուշազրութեամբ նայեցի ևս
նրան: Այն, արծիւ էր. միայն կրծքի վրայ փայլող
կարմիր ժապաւէնը ոչ թէ ժապաւէն, այլ արեան շերտ
էր:

—Ելի՞ չո ճանաչեցիր.—կրկնեց արծիւը:

—Չայնդ ծանօթ է,—հազիւ մըմնջացի ևս:

—Հապա մի նայիր, զուցէ ճանաչես,—և
թերւելով՝ ցոյց տւեց ճակատը:

Այնտեղ մի փոս կար. խոր, խաւար մի փոս...

Կուրծքը՝ վիրաւոր, ճակատը՝ փշրւած...

—Ե՛, ճանաչեցի...—կանչեցի յուզւած, և արտաս-
ւալից աչքերով նրա փշրւած ճակատն ու արնոտ-
կուրծքը համբուրեցի. — ճանաչեցի, բայց զու...
չէ որ...

—Ես, այս, մեռած էի... բայց այն մարմինս էր,

որ ընկաւ այլունիդ... իսկ ես՝ գաղափարն եմ, որ զբակն սպանել չը կարողացաւ, և ահա այժմ ես միշտ մենդանի, միշտ թեաւորւած, ճախրում եմ բարձրում:

—Իսկ ուր ես գնում:

—Գնում եմ այնտեղ, ուր երխասարդ ամուսնու գրկում համբոյք սպասող հարսը խըլեցին, ուր ծծկեր մանկանց անմեղ սրտերում վայրի հրճւանքով նիդակ շամփրեցին... Այնաեղ, որ կաթ-կաթ ծորաց արիւնը վիրաւոր սրտից, որտեղ կարեկից տառմօր փոխարէն՝ դաշոյնն աղասեց մօրը երկունքից... ուր ընկերներս ցաւից կծկելով քարեթ զրկեցին, և հըրդեհների բոցերի միջից բողոքը մռնչաց...

Ես ամեն տարի գնում եմ այնտեղ: Ուզնում ես, գնանք միասին:

—Գնանք,—ասացի:

Եւ մենք գնացինք:

Բարձրագագաթ լերսն ստորոտով գետը, վճիռ ալիքներն ափերին զարկելով կտրում էր թաւշապատ դաշուը: Ափերից մէկի վրայ շարւած էին անթիւ, անհամար մոխրակոյտեր, որոնց արանքից մարգկային ոսկորներ էին դուրս ցցւած. կիսախանձ, սևացած ոսկորներ: Ցնցւեցի:

— Իմ ոսկորներս են զրանք.—ասաց արծիւը.— Ժիշնում ես... դիակս կրակն էր նետել...

Երկու կաթիլ արտասուք թուան աչքերիցս և դէմքս ակոսելով ցած իջան:

—Զէ, չէ,—ասաց արծիւը, դէմքս շոյելով. — մի լար, այն կողմը նայիր, և թող միտիթարւի սիրտդ: Նայեցի:

Զքնազ, կարմիր ծաղիկներ էին, Եղեմից բերւած, պէճսւած գրաւիչ, գիւթական պերճանքով:

—Երկնային ծաղիկներ... ի՞նչ ծաղիկներ են սրանք:

Դրանք մեր թափած արխւնից ծլած ծաղիկներն
են... հապա մի հոտ քաշիր:

Մօտեցայ ու հոտոտեցի մէկը:

Ի՞նչ քաղցր հոտ էր այն...

Ազատութեան հոտն էր բուրում:

Արծիւը վեհօրէն ծաղիկներն էր դիտում, թէ չեն
միծացել արգեօք. իսկ ես անյագութեամբ իմ կարօտած,
իմ փափագած բոյըն եթ հոտոտում և անմեկնելի հոտից
արրեցած՝ էլ ինձ զսպիլ չը կարողացայ ու գոռացի
ամբողջ ուժով.

— Ազատութիւն, Ազատութիւն...

—

Զայնիցս արթնացայ: Տեսածս երազ էր:

Դարձեալ բլրի վրայ էի, և քամին մեզմով օրո-
րում էր ինձ...

—————

ՓՇՈՏ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Մենք նստել էինք սաղարթաշատ-մատաղ կաղ-
նիւմբի տակ. անձրել մանր շիթերով քամւում էր
երկնքից, բայց մեր «տունը» չէր կաթում, որովհետեւ
ճիւղերը միմեանց հետ կապել ու պնդացրել էինք
տերեւներով։ Մեր նստած տեղից մի քանի քայլ
հոսու՝ անմահական աղբիւրն էր քըլքըլալով հոսում.
այդ աղբիւրը նշանաւոր էր իր երրեմնակի ունեցած
խորհրդաւոր այցելուներով, սակայն այժմ մեր ուշա-
զրութիւնը գրաւել չէր կարողանում. շատ էինք ջար-
գւած։

Յուրա էր, և սոված էինք։ Նոր հրահրւած կրակի
վրայ խորոված վայրի խնձորները մեր ստամոքսին
ոչինչ չէին տալիս, իսկ Շատախի ցուրտը մեր ցնցու-
թի դարձած շորերի արանքով իր ոյժն էր փորձում
մեղ վրայ։

Մի այլ ծառի տակ, կրակի կողքին ես էի նստած,
իսկ ինձ մօտ պառկած էր ընկերս, գլուխը ծնկանս
դրած։ Շատ էի յոզնած, բէզարած, ես էլ էի պառկել
ցանկանում, բայց ընկերոջս հանգստութիւնը խանգա-
րել չէի կարող։ Անհաւասար կուի մէջ նա վիրաւոր-
ւած էր և կուի դաշտից մինչեւ այդտեղ՝ երկու օր
քայլել էր մեղ հետ հաւասար, առանց տնքալու, ա-
ռանց նոյն իսկ շալակի պարկը վերցնել թողնելու
Այժմ նա պառկել էր ինքնամոռաց զրութեան մէջ,
աչքերը փակած, առանց շարժւելու, առանց մի ձայ-
նի. — միայն շնչառութիւնն էր, որ ուղղնում և իջե-
ցնում էր կուրծքը։

Ես նայում էի ընկերոջս գունատ, նիհարած դէմաքին, երկար ժամանակ չը խուզւած մաղերը եկել խճճւած փռնջերով կախւել էին ճակատի մի կողքից, շրթունքները հպւած էին իրար, իսկ ամրող դէմքին փայլում էր անխռով նինջի կնիքը:

Ընկերս բաց արաւ աչքերը, նայեց երեսիս, մի քիչ կանգ առաւ, և նորից ծանրօրէն իջեցրեց կոպերը, կարծես մի բան էր ուզում ասել, բայց չասեց: Անցաւ բաւական ժամանակ, և մի անգամ էլ ընկերս բաց արաւ աչքերը, երկար նայեց ինձ, գլուխը քիչ բորձրացրեց, ժպաաց:

— Զես ծիծաղի, — ասաց նա:

Զը հասկացայ ասածը, բայց ուրախացայ, որ նա ժպառում է:

—Մի բան ասեմ, չես ծիծաղի, — կրկնեց նա:

— Է՞ն, զու էլ... ինչու պէտք է ծիծաղեմ, — պատասխանեցի նրան խրախուսական ճայնով, մտածելով, որ ընկերս անշուշտ մի դադանիք ունի ասելու:

— Գիտե՞ս, — շարունակեց նա՝ նոյն ժպիտը բերնին, — յանկարծ միտս ընկաւ, որ ես մայր ունիմ այնակը, շնոր հեռու... և սիրտս... ուզեց...

Ընկերս լոեց. իսկ արտասուքը երկու խոշոր կաթիլներով զլորուեցին ոսկրացած այտերի վրայով, մինչդեռ ժպիտը զեռ նստած էր շրթունքներին:

Ես զգացուեցի աչքերս լքցւեցին:

Ընկերս տեսաւ այդ և առանց այլ ևս մի բան ասելու՝ աչքերը փակեց, բայց այս անգամ նրա դէմքը տխուր էր թախծու...

Եւ երեկոյեան, տոպքակը շալակած՝ ուժասապաս, ծանր թանջելով, նա էլի՛ քայլում էր մեզ հետ նոյն ճանապարհով, զէպի նոր կախ, զէպի գերեզման...

ՊԱՏԿԵՐԸ

(Պետրոս Սերեմ Շեանի յիշտակին*)

Թաւշապատի դիւանի վրայ անհոգ տարածւած ծուլօրէն ծխում էի ձեռքիս թանկանոց ծխախոտը, և գուլանին անմեղ զւարճութեամբ բաց թողնում սենեակի մէջ։ Միտքս էլ էր հանգստանում. ոչ մի բան չէր խանգարում իմ յետ-կէսօրեայ խաղաղութիւնս։ Մէկ-մէկ միայն հարեան սենեակից ուրախուրախ թոշկոտող երեխանիրիս քրքիջներն էին տարածւում, և էլի լուս։

Իսկ իմ դէմ ու դէմ, ու շրջանակում, պատի վրայից կախւած էր նրա պատկերը։ Անոպատակ թու փառող հայեացը յսնկարծ կոնդ առաւ նրա վրայ և մեխւեց այնուեղ։

Հայզուկի տոպրակը մէջքին, հրացանը ձեռքին, փամփշտականիները պինդ կապած, ոօլերը հագին, մաքնւր-մեղմ հայեացքն աչքերիս զցած՝ նայում էր նա ինձ։

Ու միտքս շարժւեց, և ես յիշեցի...

Յիշեցի ձիւնապատ, բարձր լեռները, յիշեցի խոր-խոր, մթին ձորերը, որաեղ ևս և նա, մեր ընկերներով ձեռք-ձեռքի տւած, սիրտ-սրտի յարած՝ սուրբ գաղափարի անունով մոլւած, մաքառում էինք, մազլցում՝ սարը եղնեղու, խոտի արմատներ դաշոյնով հանում՝ մեր ստամոքսի բողոքը լոեցնելու... յիշեցի գեր-հերոսական մեր կոփւները, սիրտ թրթուացնող մեր սազմական խրոխտ երգերը, և ոտարքորիկ արնուու,

մեր մերկ ոտները... յիշեցի միասին տարած մեր այն տանջալից՝ բայց քաղցր օրերը... յիշեցի, և ծխախոտը նորից վառեցի, ու ծխի թանձր, կապոյտ քուլաներն ուղարկեցի դէպի պատկերը, նրան ծածկելու...

Խիդմ խօսում էր...

Նոսրացած ծխի միջից հայետցքս նորից-բռնադատորէն-ընկաւ պատկերին, և էլ այնտեղից պոկել չը կարողացայ:

Պատկերը շարժւեց...

Եւ ահա կապոյտ ծխի արանքից շրջանակները յետ-յետ խաղացին և պատկերը կամաց-կամաց կենզանանալով՝ ցած սողաց պատից, երկու քայլ արաւ, և պաղ-ցուրտ հայեացքն աչքերիս սեեռած՝ առաջս կանգնեց:

Տոպրակը մէջքին էր, հրացանը ձեռքին, իսկ վզի չորս կողմը կապոյտ խալ կապած, — որ կախաղանի թուկի հետքն էր: Ես սարստեցի և աշխատեցի չը տեսնել նրան, երեսս շուռ տալ, կամ ծուխ բաց թողնել ծխախոտից՝ երեսը ծածկել, — բայց մեխւածի էի, անշարժ, ճնշւած...

Իսկ նա նայում էր, նայում սպանող, ճընշիչ հայեացքով: Եւ ես փորձեցի:

— Ընկեր, ասացի, ես շատ ուրախ եմ...

Նա ժպտաց դան, դան ժպտով, և բառերը սառան շրթունքներիս վրայ:

Բայց ահա փոքր առ փոքր նրա աչքերը բոցով վառեցին, դէմքին վեհութեան փայլակը շողաց, երկու կնճիռներ եկան, նստեցին չքնաղ ճակատին:

— Ընկեր, ասաց նա, ընկեր... մենք ի՞նչ ընկեր ենք..., մենք էլ ընկեր չենք... Դու դաւաճանեցիր մեր այն փայլիայած սուրբ գաղափարին: Եւ երբ քո նախ-

* Կախւած Աղբիանուպօլսւմ, 1901 դեկ. 9-ին:

կին ընկերներդ անվճառ քայլերով անց էին կենում փուշ ու տատասկով ծայրէ ծայր լբցւած այն ձանապարհը, երբ նրանք տանջանքի հնոցի միջից բանտի ցուրտ ու մոռայլ պատերն էին ձանգառում անզօր եղունգներով, երբ կախաղանի վրայ նրանց սառած զիակներն էին ճօճում քամու բերանից, երբ հրացանի շիկացած զնդակները նրանց սրտերն էին խորովում, անցնում, — դու նրանց մոռացած՝ անձնատուր եղարկեանքի սին վայելքներին, դու նրանց մոռացած՝ երրեմն այնպէս պաշտած, պաշտպանած վեհ ձգտումներդ քո թշւառ «հս»-ի պատին մեխեցիր, և երբ նրանք ցրտից սառած, փէտացած՝ բարէ բարձերի վրայ էին ննջում, դու տաք սենեակներում թաւշով զարդարուն դիւանների վրայ հաճոյք զգացիր...

Ծնկեր... ոչ, մենք ընկեր չենք...

Քանի քո շուրջդ արիւն է հոսում և դու անտարքեր՝ մեռնող զռների բառաջն ես լսում, ու սիրտդ չի պայթում կատաղութիւնից, քանի արիւնդ այլ ես թանկ արժէ քեզ համար, և քո ուներդ ձեան սահմաններում սառոյց չեն կարում, քանի չորս կողմդ սասանեցուցիչ անարդարութիւնները թեերը լայն բացած՝ թոփքներ են անում, կեանքը մեռցնում, արիւն սառեցնում և դու անխոռով՝ կուրծքդ չի մրրկում արդար զայրոյթով, ապա դու միայն մի Պիղատոս ես, որ ընկերներիդ կարմիր արիւնով ձեռներդ լւացած՝ մի կողմ ես կանդնել... դու դաւաճան ես, որ զաղափարդ ծախու ես հանել... Ո՞չ, մենք ընկեր չենք...

Նրա յուզալից վերջին բառերը սիրտ շանթող շեշտով թնգացին սենեակում, և ես սարսափած, աչքերը բաց արի...

Նա էլի այնտեղ էր... սև շջանակի մէջ, տոպրակը մէջքին, սօլերը հագին, մաքմւը մեղմ հայեացքն աչքերիս զցած...

* * *

Կինս, երեխաներս, ազգականներս... Այն կապոյտ
կամարը, զարնան թռչնակների անոյշ երգերը, կար-
կաչուն ազրերց քաղցր խոխոջները, պայծառ արևը,
մախմար դաշտերը... Էլ ես չեմ տեսնի: Դատավճար
կարգացին արդէն. վաղն առաւօտեան, իմ դաւանած
գաղափարներիս համար՝ հրացանների առաջ պէտք է
կանգնեմ: Եւ հրեշտականման երեխաներիս պայծառ
դէմքերը գալիս, խաւարին բանտում կանգնում են զի-
մացս... Միրտս կըծկըւում է, աչքերս՝ այրւում. լեզուս
կծում եմ, բերնիցս թռչող ցաւի ազաղակը զսպելու
համար:

Խաւար է բանտը, խոնաւ, ցուրտ, մոայլ. և եր-
րորդ օրն է, որ քունն անսահման հեռու է փախչում՝
կարմրած աչքերիցս: Յարդի վրայ պառկած, անզօր,
ուժասպառ թևերս կրծքիս վրայ ծոլած՝ աչքերս յառել
եմ խաւարին, նրա թանձրութեան միջից մի բան տես-
նելու, նրանով զրազելու, բայց ոչի՞նչ, ոչի՞նչ... խոր
է խաւարը: Իսկ զուրսը միայն իմ պահապանիս միա-
տեսակ, համաշափ քայլերի ձայներն են թնդում, և
նրանց ձանձրացուցիչ բաղխումների տակ՝ ճմլում է
նոզիս:

Դարձեալ խաւար է անթափանցելի, հեղձուցիչ
խաւար... և ես աչքերս տնկել եմ նրան:

Բայց լոյսի մի փունջ պատոեց խաւարը և այն-
տեղ նորից ես տեսայ նրան, սօլերը հագին, տոպսակը
մէջքին... վզի չորս կողմը պատող կապոյտ խալից լու-
սոյ ճաճանչներ էին գուրս ցոլում, շրթունքներին փայ-
լում աննման մի ժպիտ, իսկ գեղեցիկ աչքերն ինձ էին
նայում մի սիրազեղ գ, անոյշ հայեացքով:

Ես բազուկներս խանդավառ սրտով դէպի նրան
տարածեցի:

— Բնկեր, այդ դժւ ես, բացականչեցի:

— Ես եմ,—ասաց նա քաղցրահնչիւն ձայնով,
— ես եմ, սիրելիս:

— Ինչու համար ես եկել այս մռայլ բնակարանա:

— Մերձաւորներիդ ահաւոր ցաւը արձագանք տը-
ւաւ սրտիդ խորքերում, քոնը մռացար, և նրանց օդ-
նելու վսիմ տենչանքով՝ յախուռն թափով եռացող
կհանքի յործանուտի մեջ սեպճական բաւականութիւնդ
զանել ցանկացար: Դու կատարեցիր սուրբ պարտակա-
նութիւնդ, և ես եկայ քեզ այցելելու... չէ՞ որ մենք
ընկերներ ենք:

Ապա նոյն անմեկնելի ժպիտը րերնին՝ կոացաւ
և մաքուր, ընկերական ջերմ սիրոյ շըրթունքներով՝
տաք-տաք համբոյըներ դրաւ ձակատիս:

Սիրտս լայնացաւ, հոգիս պարարեց երջանիկ
լուսոյ ճառագայթներից և ուրախութիւն արտասուբնե-
րը երեսս լւացին...

Բայց նա գնում էր...

Նա կամաց-կամաց հեռացաւ ինձնից էլի ժպտա-
լով, լոյսն ազօտացաւ և նա ձուլեց խաւարի հետ:

— Մի գնա, ընկեր ջան..., ես էլ եմ զալիս.—կան-
չեցի յետերից և ոտքի թուայ:

*
* *

Էլի նոյն բանտը, խոնաւ, մռայլ և ցուրտ:

Օրը բացւում էր. կեանքիս վերջին օրը:

Բայց ես հանգիստ էի, միսիթարւած:

Մենք ընկերներ էինք...

ՔԱՐԱՆՁԱԼ

Արտօսի փէշի վրայ, ուղիղ շքեղազարդ հովաի ծայրում, որտեղից գէպի Շատախ տանող լիոների կուտակումներն են սկսում, փոքրիկ, վճիռ աղբիւրի կողքին գտնուում է մի ընդարձակ քարանձաւ։ Ոչնչի չէ ծառայում այդ քարանձաւը, ամառայ շող օրերին միայն, երբ Ամիրանցի Մուսաֆա-փաշայի խաչները բերում են սար, հովիւները մէկ-մէկ գիշերում են այնտեղ։ Իսկ այժմ հոկտեմբերի սկզբները լինելով նրանք վաղուց արդէն իջել էին աւելի տաք տեղեր, և արօտներն ու լիոները մնացել էին վայրի ոչխարների ու այծերի արամագրութեան տակ։ Մէկ-մէկ միայն Շատախու գիւղերից վատահանում էին գիշերները լիոների ծայրերն ու ժայռերը քերելով անցնել դէպի թերծ, այնտեղից վան մտնելու համար։

Եւ հեշտ չէր այնտեղով անցնելը. զանազան առասպելանման պատմութիւններ էին տարածւել շրջակայքում, որ իբր թէ Արտօսի փէշերին ոտք զնողն այլեւ տուն չի վերադառնում, անհիտանում է, նրան բռնում են «աներևոյթները»։ այդ պատճառով քուրդ կամ տաճիկ ճանապարհորդները Ոստանի վրայից էին անցնում դէպի Թաղ, զգալի շրջան կազմելով...»

Բայց այն գիշերը քարանձաւում ինչ-որ մարդիկ էին տեղաւորւել, որոնք ոչ հովիւների, և ոչ էլ ճանա-

պարհորդների էին նմանում: Քարանձաւի ձախ կողմում թէծ կրակ էր արւած, որի լոյսը զբովց չէր երևում, իսկ չորս կողմքը նստառած էին մի խումբ երիտասարդներ, քրքրւած շրերով ու ոտնամաններով. բայց ամեն մէկը զոյգ-զոյգ փամփուշատականներ կապած, գաշոյնը կողքին, իւղամանն ու թիթեղայ ջրամանը միւս կողքից քարշ տևած, միւմի կտաւից կարած տոպրակներ մէջքներին պնդացրած, և հրացանն էլ պատրաստի՝ ճնկներին զրած:

Հայդուկներ էին:

Զանազան կողմերից ու երկրներից Մեծ Գաղափարը բերել, նրանց միացրել էր այզաեղ, և երկար ժամանակեայ միասին կրած դառնութիւններն ու առնջանքները նրանց մէջ կուել էր անբաժանելի ընկերական մի կապ. ու միայն զնդակն էր նրանց իրարից խլում:

Քարանձաւի երկու կողմերում հսկում էին հայդուկներից երկու որբիշ երիտասարդներ, անզափար մի քարից միւսն անցնելով, գիշերային մթութեան միջից ուշադրութեամբ ականչ գնելով ամեն միձայնի, ամեն մի չրիսկոցի: Ա՛վ զիտէ. թէի այդպիսի ժամանակ այդտեղ սատանաներն էլ երեալ չէին կարող, բայց հայդուկային կեանքում պահապանութիւնը մի որբազործւած օրէնք է, որին պէտք էր հպատակւել:

Իսկ քարանձաւի ներսը, կրակի վերևի կողմից հայդուկներից մէկն է պառկած. նրա զէմքը պլլւած է, աշքերը կիսարաց, երեսը ոսկրացած, և զառանցում է տարութեան մէջ. ուսների տակելն ու երեսն ուղել հն, ջրակալել, սպիտակ փուժեմուգ բարձրացել: Նրա շալւարի մի փողքը — ~~ՏԻԳՐԻՋ ԳՈՅՉ ԵՈՒԼՈՒ~~ գայ, պատուած է, քրքրւած, փաստակը ~~ՀԱՅԱՄԱՉ ԱՌԱՋՎԱՐ~~ պատկանով, որոնցից երկունք ապարդիւ: անցած քողովների հետքեր:



Փոքրիկ աղքատկից ճակատին բռնող պաղ ջուրը
նրան չի օգնում, նա ուշի չի գալիս, իսկ իրենք
վաղը պէտք է ճանապարհ ընկնեն. զեռ որքան տեղ
ունեն անցնելու... Գոնէ ոտքերին մի ճար պէտք էր
անել:

Եւ հայդուկներից մէկը, աւելի փորձւածը, գանակը
հանեց գրանից, և հիւանդ ընկերոջ երկու ոտքերի
ջրի ուսուցքները պատուց, ջուրը բաց թողից, սովա
հանեց գաշոյնը, ծայրը խոթեց կրակի մէջ, և երբ շի-
կացաւ, կաս-կարմիր գարձաւ, հանեց կրակից ու սկսեց
ուների տակի բշտիկները դադել...

Ճենճերային խանձահոտութիւնը տարածւեց քա-
րանձաւում. քարասիրու հայդուկների աչքերից ար-
ցունք քամւեցան...

Մի քանի ժամ անց՝ հիւանդ հայդուկը ուշի
եկու, նայեց փալաս-փուլասով փաթթած ուներին.
Ինչ որ տապ և քնից հանգիստ, անխոռվ քնով:

Առղջանում էր...

ԱՍՏԱԲ

I

Մանչում է փոթորիկը. ծփում են Աղթամարի կապոյտ ջրերը, փրփրում, ուռչում, բլրանժան կոհակներով գարկում ժայռոտ ափերին, և ուժեղ շառաչմամբ փուլ գալիս, ձուլում ջրերին ու յետ նահանջում՝ նոր-նոր արշաւող կոհակներին ազատ ճանապարհ տալու համար:

Եւ խորին խաւարի ու բնութեան արհաւիրքների միջից մի թեթե նաւակ ալիքների վրայից երրեմն անդունզը սահելով, երբեմն դէպի վեր, երկինք թոշելով՝ Աղթամարի յուզեած երեսն է ակօսում:

Կոհակների ձեռքին խաղալիք դարձած փորբիկ նաւակն էլ վազուց է, որ չէ լսում դեկին, և նրա մէջ նստած մի խումբ մարդիկն՝ այլև յոզնած կատաղի ալիքների դէմ մղած պայքարում՝ իրենց յանձնել են փոթորիկի կամքին:

Մինչդեռ հէնց իրենք են փոթորիկը:

Մի ամրող մարտիրոս ժողովրդի լեռնացած վիշտն ու յոյզն իրենց սրտերում ամրաբած՝ տունտակ մոռացած, հանգիստն ուրացած, նրանք լեռներին են հաւատացել իրենց արտօնանջը, և գնդակներին՝ իրենց բողոքը: Նրանք այդ երկրի տանջանքների ծնունդն են, ըմբռատոթեան մարմնացումը, արեան բովի մէջ կը ուժած, և հրդեններում կոփւած: Նրանք մանչում են, երբ ուրիշները քծնում են և աղերտում, և նրանց սիրաբ

թնդում է հրարուղիսի նման, երբ մօրթոտող կանանց
ու երեխաների ճիշերն են լուռում:

Եւ իրենց նման անհանգիստ, իրենց նման փո-
թորկւած ալիքների վրայից նրանք գնում են զեսի
այնահեղ, միւս կողմը, որտեղ նոյնպէս արիւն է ծո-
րում, արցունքը հոսում և հեծեծանքն ու անէծքը
միասին խառնւած՝ երկիրը գողացնում: Նրանք գնում
են, որովհետեւ նրանք են այդ երկրի փրկարար ոգին,
որովհետեւ նրանք են, որ բոլոր տանջւածների համար
պէտք է բաղոքեն, և իրենց առնական կրծքերնին զէմ
տան վահանի նման՝ հարւածների առաջ:

II

Մանչում է փոթորիկը:

Եւ Գէորգ-Զաւուշը նաւակի մի ծայրին նստած
ուշագրութիւն չի գարձնում չորս կողմը շառաչող ա-
միքների ծփոցներին. Նա չի նկատում, որ Աղթամարը
եսում է, փրփրում, այլ արծւի աշքերը սկեռած խա-
ւարին, կարծի ուղում է պատուիլ մթութեան թանձր
քողը և այնահեղ, նեսուն թափանցել.

—Էլ ալիքներին չենք կարող յաղթել — ասացին
թիավարները, Գէորգ-Զաւուշին. — կորցրել ենք ուղ-
ղութիւնը... որ կողմն ենք գնում, չզ դիտենք:

—Ալիքները... թող տանեն, որտեղ ուղում են.—
պատասխանեց Զաւուշը, և նորից աշքը տնկեց խա-
ւարին:

Խիզախող յործանքները մի անգամ էլ գրոհեցին,
զրկեցին նաւին, երկինք հանեցին, և տակից սահելով
բաց թողեցին բարձրից. Նաւակը ճռնչաց, տնքաց, տա-
տանւեց աջ-ձախ և ալիքների ուժգին մզումով՝ շպր-
տեց առաջ:

Թւզիդ գէմ ու դէմ, մթութեան շղարշով գէմքերը
պատած հակաների նման, վիթխարի ժայռերն են ու-

Ները իրել ծովի յատակում և չեն էլ զգում, թէ ալիք-
ներըն ինչպէս են կատաղած՝ իրենց ոտները լիզում
ու ծեծում:—Նաւը նրանց դէմ առաւ:

—Օ՛, սիրած ժայռեր, — ասաց Զաւուշը. — դէն,
տղերք, իջնենք. ահա ափը:

Մի քանի ջլուտ բազուկներ ձգւեցին դէպի ժայ-
ռերը, նաւը իր տեղում մեխւեց, և միմեանց յետեից
մի խումբ տղամարդիկ, ոտքից մինչև գլուխ զինւած՝
ափը դուրս թռան:

III

Իսկ իրենց յետեում Աղթամարը դեռ շարունակում
էր ոռնալ ու գոռալ:

—Շատ ենք շեղեւ, — ասաց Աստարը, — մենք կը ծ-
վակի մօտերն ենք իջել:

—Այս, — պատախանեց Զաւուշը, — բայց մասս
չունի. գիշերս լեռների վրայից կը շարունակենք մեր
ճանապարհը, մինչև լոյսը կը բացւի:

Ու նրանք շարժւեցին՝ թրջւած շորերով ցուրտ
քամուն դիմագրաւելով:

Ծովափին ընկած ճանապարհը շատ է քար քա-
րոտ ու տաժանելի. նրանք գլորւում են, նորից բար-
ձրանում, քարերը զրկում, ժայռը մազցում, էլի ցած
սողում, մատներնին արիւնուում, ծնկներնին ջարդում,
բայց առանց «ուփփի», առանց ցաւ արտայայտող որի
է ձայնի:

Այդ երկրի ոգիներն են զրանք, տանջանքում
քովւած, և արհամարհում են բոլոր տանջանքները:

Իսկ որսորդները,.. ինչեր չեին տայ, եթէ այդ
ամեն տեղ լինող, բայց միշտ աներեւոյթ ոգիներին
բռնել կամ ջնջել կարողանային: Բազմաթիւ անգամ
ցանցեր էին զցել, բայց ապարդիւն: Փրփրում էր փաշան,
նոր դաւեր նիւթում, միմեանց յետեից հրամաններ

արձակում, որ ամեն ահսակ զգուշաւորութիւններ ձևաք տռած՝ լոլոր անկիւններում նրանց որոնեն, նրանց ըստասեն:

IV.

Խումբը շարժւում է. զրոյց անելու կամ հանգստանալու ժամանակ չունին. մէկ-մէկ միայն առաջնորդի «քելէք» շտապեցնող ձայնն էր լաւում: Եւ նրանք քայլում էին ծովափին ընկած քարքարուաններով:

Յանկարծ քարերի տակից ինչոր ուրեականների մի երկար շարան իրենց զէմերը ցցւեցին. կառավարութեան պահակախումբն էր այդ որ գիշեր-ցերեկ հսկում էր այնտեղ, համոզւած լինելով, որ Գէորգ-Զաւուշը իր արծւիկներով փոթորիկներին անզամ դադար չի առնում, ու կարող է պատահել, որ այդ գիշերն էլ այնտեղ երևայ:

—Ո՞վ է... կանզնիր, —ինդաց հրամանը պահակախմբի կողմից,

—Տղէրք, զօրքն է, — կանչեց Զաւուշը, — պատուից շղթան, անցնենք լեռները:

Եւ ալիքների ծփոցներին ու փոթորկի ունոցներին միացան հայդուկների հրացանների որոտոցները: Պահապանները յետս ընկրկեցին, քարերի տակ սպանածների դիակները թողնելով: Բայց շուտով ուշարերւելով շղթան տարածեցին, և քարերը վահան բռնած՝ սկսեցին կարկուտի նման ամեն կողմից գնդակներ տեղալ:

Յետեից՝ ծալը, առաջից՝ զօրքը...

—Յառաջ, լեռները, — Զաւուշն էր, կանչեց, զարկեց շղթային և իր խմբակով պատսեց ու անցաւ:

V

Մանչում է փոթորիկը, ոսնում է ծովը, իսկ նրա

քարքարոտ, ապառաժ ափին ընկած է Աստարը կըրծ-քից վիրաւոր, որտեղից կարմիր արիւնը ծոր-ծոր շի-թերով կողքիքարերն է ծիրանի ներկում։ Վիրաւորւած է արծւիկ Աստարը. թշնամու գնդակը իր գործն է տեսել. և ընկերները չը նկատեցին, թէ ինչպէս նա ընկաւ թեթև տնքոցով, առանց անէծքի, առանց դան-դատի։

Մթագնող աչքերը չորս կողմն է յածում կտրիճ Աստարը, և ձեռքը մեկնում դէպի անբաժան, իր կեան-քի ընկեր—սիրած հրացանը. բայց վէրքը ծանը է. թուլացած ձեռքը կամաց իջնելով՝ նորից զարկւում է ապառաժ գետնին։

Ծնկերները՝ հեռու, օթոցը՝ քարեր, բարձը՝ ապա-ռաժ, իսկ իր դիմացից ուրւականները բարձրանում են, և հետզհետէ մօտենում ափին։ Տաճիկներն են այդ, որ դէպի նրան են յառաջանում զգուշաւոր քայլերով։ Ուժգին զարկերով քարախեց սիրած վիրաւոր արծւի... և յանկարծ ցնցւեց Աստարը. սպառւած ուժերն ան-յայտ աղբիւրից լցւեցան հոգին, և ամուր ճանկով ճանկեց հրացանը, համբուրեց նրան և ուժեղ թու-փով նետեց ծովի մէջ։

Եւ երբ հրացանի ջրին զարկւելու ճղփոցը լսւեց, ինքն էլ ծառացաւ, մի խոր հառաչանք արձակեց կըրծ-քից, ահեղ սստիւնով հատւեց դէպի ծով, հրացանի կորից...

Եկաւ թշնամին, մօտեցաւ ափին, հոտոտեց ա-րիւնը հերոս-հայդուկի, նայեց փրփրայոյզ ծովին, և մարդկային մարմնի ջրերին զարկւելու ձայնը լսելով, կուղէկուղ գալով յիտ փախաւ ափից։

Գիրշաթին եկ Իջևանը

(Զբոյց)

Հին ժամանակներում մի երկրում ապրում էր մի գիւղացի. նա ունէր ջլուտ բազուկներ և ուժեղ թիւկունք, օրն ի բուն աշխատում էր, քրտնում, չարշարւում, բայց միշտ էլ սոված մնում, որովհետև երկրի դօրեղները նրան կեղեքում էին, նրա ձեռքի տրդիւնքը խլում: Եւ որովհետև գիւղացին իր հօր ժամանակ էլ այդպէս էր միշտ տեսել, ուստի նրան թւում էր, թէ հէնց այդպէս էլ հարկաւոր է, որ այդ Աստեածանից տրւած ու հատատաւած մի սուրբ օրէնք է, ինքը պէտք է աշխատէ՝ ուրիշներն ուտեն: Դրա համար էլ անտըրտունչ, անբարբառ նա շարունակում էր իր քրտնաշան կեանքը՝ առանց որեւ է գանգատի:

Բայց պատահեց, որ երկար տարիներ անվերջ աշխատելուց նա հիւանդացաւ, մի առժմանակ չը կարողացաւ գուրս գալ աշխատելու, տան ալիւրը բոլորու մին սպառւեց, և այդ գառն օրերում պարտատէրը եկաւ, սկսեց նրան նեղել, թէ կամ պարտքը պէտք է տայ, կամ պարտքի փոխարէն՝ տունը:

Այս անգամ յուղեց հիւանդ գիւղացին. նրա սիրտը չէր կարողանում դիմանալ, երբ մտածում էր, որ իր պապական օջախը, որտեղ որգոց-որդի կենտրոնացած են եղել իրենց ծիծաղը, վիշտն ու տանջանքը,—

այդ օջախը պէտք է խլւի, ընկնի պարտատիրոջ ձեռքը: Եւ սկսեց խնդրել պաղատել, որ ժամանակ տրւի ինքն առողջանայ, գնայ, աշխատէ և տունն պատէ: Բայց անողոք էր պահանջատէրը.—չէ ու չէ... պարտքը, կամ տունդ.—ասաց ու կանգնեց:

Իսկ այդ ժամանակ այնտեղ իշխում էր երկրի իշխանը, ուժեղ, անւանի, հարուստ և... անխիղճ:

—Գնամ,—մտածեց հիւանդ զիւղացին,—զնամ մեր երկրի իշխանի մօտը. չէ որ նա մեր հայրն է, իսկ ես՝ նրա հպատակը, նրա հարկատուն. զնամ՝ նրա մօտ, պատմեմ դարդերս, գուցէ նա խղճայ, տունս ինձ թողնէ, իսկ այն անիրառ վաշխառուին՝ մի լաւ պատի ժամայ:

Ասաց ու գնաց. զնաց ու հասաւ իշխանի շքեղ պալատին, տպշած աչքերով նայեց չորս կողմից, նայեց ու զիտեց և երկիւղածութեամբ ու ահով լցուեց գէպի իշխանը, մտածելով, որ այսպիսի աստեղամբերձ, հոյակապ պալատում ապրողն, ի հարկէ, սու գորակսն մարդ չի կարող լինել, ուրեմն և իրենց իշխանը սովորական մարդ չէ: Ապա զողալով մօտեցաւ շէմքին, նիհարած ձեռները ծալեց կրծքին ու սկսեց սպասել իշխանի ելքին. սպասեց, սպասեց մինչև իրիկուն, և երբ իրիկնահովին ելաւ իշխանը, չոքեց նրա առաջ, համբուրեց հողը և չը համարձակեց զլուխը բարձրացնել:

—Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում,—ասաց իշխանը:

Եւ շփոթւած զիւղացին զինքը հաւաքեց, ու սրտի դարդն սկսեց պատմել. և երբ վերջացըրեց, արտասուքը եկաւ, աչքերը պատեց:

—Պարտատէրդ քեզ փող է տւել, — հարցրեց իշխանը:

—Ո՞չ, տէր իմ. — հօրս է տւել, — պատասխանեց:

ողիւղացին, դոգալով իր բախտի վճռի համար:

— Այդ միևնոյն է: ուրեմն՝ պարտ ես:

— Այս, աէք իմ:

— Այդպէս, դու խոստովանում ես, որ նրան պարտ ես. և այժմ եկել, բողոք ես յայտնում, որ նա իր փողը քեզանից պահանջնեմ է... այս դու ձբիակեր... կորիր աչքիցս, առնեգ նրանն է, քանի որ պարտքդ վճարել չես ցանկանում:

Եւ վեր կացաւ թշուտ գիւղացին, սիրաը փշրւած, կոշտացած ձեռներով աչքերը սրբեց և գնաց, գնաց այնքան, որ իրեն թւաց, թէ արդէն շատ է հեռացել հայրենի տնից, ու յոզնած, ջարդւած, պառկեց, քուն մտաւ:

Երբ արթնացաւ, արդէն բացւել էր լոյսը. նայեց այս ու այն կողմ, մօտիկ մի գիւղ նկատեց, ու գիմեց այնտեղ: Գիւղացիք կարելցարար ընդունեցին, հաց ու ջուր տւին, խնամեցին և նա առողջացաւ: Առողջացաւ, բայց մի տեսակ էր, ինչ որ բանի մասին սասարիկ խորհում էր, մինչև որ մի օր դարձաւ հիւրնկալով գիւղացիներին, խնդրեց նրանցից ալլուրի, հացի պաշտը և մի կացին ու նորից ճանապարհ ընկատ:

Անցաւ գիւղացին սարեր ու ձրեր, լիններ ու գաշտեր և մի չքնաղ սարահարթում նստեց խոտերի վրայ: Այդտեղից երեսում էին չորս կողմը փուլած կանաչ գաշտերն ու մարգագետինները, պայծառ արեն ու հեռի ձիւնազարդ բարձր սարերը, խև նստած տեղից մի քանի քայլ հեռու՝ անմահական աղբիւրն էր զլորում իր յստակի վճիտ ջրերը:

— Սքանչելի՛ է,—հոգեկան զմայլանքով ասաց գիւղացին.—այստեղ ինձ համար մի տուն կը շինեմ, էլ պարտատէր չեմ ունենայ, որ ինձնից խլի, և այստեղ կ'ապրեմ հանգիստ, տնխոսվ. զուցէ կ'ունենամ որ-

դիներ, թող այստեղ նրանց համար գտոնայ հայրական օջախ, բայց աւելի բախտաւոր՝ քան նախկինը:

Վճռեց, և արաւ, անտառը մօտիկ էր. նոր տուն ունենալու ցանկութեամբ ովերւած՝ գիւղացին զիմեց անտառը, պտտեց կացինը և զարկեց ծառին. Էլ այսուհետեւ նա հանգիստ չունէր. իր քրաինքներից նա առուներ շինեց, զիշեր ու ցերեկ իրեն տանջելով ծառներ կտրեց, ուժեղ ուսերին գերաններ բարձած՝ քաշեց, հաւաքեց, տաշեց, տաշտաշեց, և զերմարդկացին ճիգեր՝ զործ դնելով՝ իր իսկ ձեռներով ստեղծեց վերջապէս այնքան փափագած, այնքան երազած իր ապաստարանը:

Շինեց, կանգնեց տան կողքին և հրճւանքով ըսկեց զիտել նրա պատերը. նա հպարտանում էր, իր աշխատանքի արդիւնքը տեսնելով: Գիւղացու խորշումուծ ճակատից կնճիռներն անհետացան, նրա վշտու աչքերը արթնացան, շրթունքները յետ-յետ խաղացին և գոհունակութեան մի սփոփիչ ժպիտ փայլեց շըրթունքներին:

Նա ուրախ էր, նա երջանիկ էր:

Բայց ա՞ն մի օր, երբ նա դէպի մօտակայ աղբիւրն էր զիմում, մի բան նկատեց և սառած, զարմացած՝ տեղն ու տեղը կանգնեց:

Զէնք ու զրանով վառւած ճիաւորների մի սուար բազմութիւն՝ արագ քայլերով դէպի սարահարթն էր զալիս շտապով: Երկրի իշխանն էր այդ, գոռող, ահարկու, եկաւ, հասաւ սարահարթը, ցած իջաւ ձիուց, խորին ուշաղըութեամբ նայեց չորս կողմը, ու զննեց, բոցու աչքերով շանթեց գիւղացուն, ապա խրոխտ ձայնով դարձաւ թիկնապահներին:

— Այս սարահարթը շատ զեղեցիկ է. հօրիզոնը լայն է ու մաքուր, օգը դուրեկան, ջրերը՝ առաս...

քանդել այս տունը. քանդել... այստեղ ինձ համար մի
նոր տեսակի շքեղ ամրոց պէտք է կառուցեմ:

Զիաւորները վրայ թափւեցան, և մի ժամւայ մէջ
զիւղացու մէջքի քրտինքից խոնաւացած բոլոր գերան-
ները մի կողմը թռան: «Նոր օջախն» էլ խլւեց նրա
ոսկրացած ձեռքից:

Զրոյցն այստեղ լոււմ է, և յայտնի չէ թէ այդ
միջոցին զիւղացու ջղաձգաբար սեղմւած Առւտ ըը-
ռունցքն ինչի ծառայեց:

ՈՐՆ Է ՄԱՐԴԸ

Մեզ մի բանւոր ունէինք, անունը Բախշի, յաղթ կազմւածք ունէր, և, ըստ երևոյթին՝ ուժեղ։ Ուրիշ առանձնայատկութիւններով աչքի չէր ընկնում, բանւոր էր ու բանւոր։ Նա էլ միւսների նման առաւտօնները վեր էր կենում, դուրս գալիս գործարանի բակը, և տրւած ցուցմունքներով՝ գործիքներն այնտեղից այստեղ, այստեղից այնտեղ քարշ տալիս, մինչև որ երեկոյան գործը վերջանում էր և նա նաւթով ու կատով ձեռները մաքրելով՝ զնում էր իրեն բաժին մնացած սեփական ժամերը տնօրինելու։ Այդպէս նա վեցամիս էր անց կացրել, և ինքը մեքենայ գարձած՝ այդ ձևի գործը նրա համար արգէն սովորական էր գարձել։

Բայց մի օր մի դժբախտութիւն պատահեց, որ մեծ փոփոխութիւն մացրեց նրա վարած կեանքի մէջ։ Երեք հոգով երկաթ բարձրացնելուց՝ մի ծայրը բաց ընկաւ և զարկեց Բախշու աջ ոտի թաթին։ Ոտը չըփշրեց, բայց սաստիկ ուռաւ, կապտեց, այնպէս որ այլ ևս ոչ թէ աշխատել, այլ թէկուզ ման գալ՝ անկարելի էր։

Գնաց հիւանդանոց. և այնուհետև մի ամիս շարունակ նո զնում էր, գալիս, մինչեւ որ վերջապէս՝ հասաւ «պալուչկայի» օրը։ Նա էլ միւսների հետ կանգնած էր լուսամուտի տուած. և երբ հերթը հասաւ ամսականն ստանալու՝ մօտեցաւ լուսամուտին, «կնիթկան» մեկնեց և ստացաւ 10 բուրլի փող, ապա քիթը վերքաշելով, ինքն-իրան ինչ որ խօսելով հեռացաւ երեխ

նեղացել էր, որ քսան բուրլու փոխարէն՝ 10-ն են տալիս, հիւանդ ժամանակւայ կէս-կէս օրերը դուրս դալով. կամ թէ հէնց իր ոտի վրայ էր բարկացել, որ «յիմարութիւն էր ունեցել երկաթի տակ ընկնելու»:

Հետևեալ օրը Բախշին նորից դնաց հիւանդանոց և այստեղից ուրախ-ուրախ վերապարձաւ:

— Այժմ բոլորովին առողջ եմ—առաց նա, զրասնեակ մտնելով, —ահա բժշկից բերած առողջացման վկայականս. դէյ այսուհետեւ օրերս սաղ-ստղ կը զբէք: Եւ նա դուրս եկաւ գործի:

Բայց մի երկու օրից յետոյ նկատելի եղաւ, որ Բախշին էլ առաջւանը չէ, կեղծառոր և անբարեխիզմ է դարձել. շարունակ զալիս ու գանգառում էր, որ նա փախչում է գործից, ժամերով կորչում, թաղ կենում. և երբ նկատողութիւն են անում, սկսում է մթթմրթալ:

Մեքենայ Բախշին՝ անբարեխիզմ, քրմի պէս ծանրադէմ Բախշին՝ կիղծաւոր... մի բան կար անշուշտ: Մկնեցի հետամուտ լինել, և խսկապէն՝ նա փոխւել էր, հասում էր մի որ և է մեծ անւի, կամ դիք զրած գործիքների կողքի այնպիսի դիրքով, որ հեռից իրեն նկատող չլինի, բայց ինքը բոլորին տեսնէ: Եւ հէնց որ տեսնում էր, որ արդէն եկել, մօտենում են իրեն, իսկոյն վեր էր թռչում և այս կամ այն երկաթը դրկում ու անքում, իրեկ թէ աշխատում է, պարապ նատած չէ եղել: Երկու շարթու չափ նա շարունակեց իր այդ ձեի լարախաղացութիւնը՝ միշտ քծնող ժայռուն ու շողոքորթող բառերը բերնին, մի բան, որ նրանում երբէք չէր եղել նախ քան այդ: Նկատելի էր մանաւանդ, որ մենակ մնալոց—աջ ոտից չուստը հանում էր, բերանը քաշքշում, նորից հազնում:

Մի օր վերջապէս հանելուկը պարզեց: Մի ծանր

գործիք պէտք է բարձրացնէին գետնից ու դնէին փայտերի վրայ, որպէսզի չը փշանար. Բախչին քաջարար բռնեց մի կողմից, բայց հէնց որ մի քիչ բարձրացըրեց ու ծանրութիւնն զգալի դարձաւ, նա կարմրեց, տնքաց, «ու շ... արաւ և երկաթը բաց թողեց. միւս բանւորները չըկարողացան պահել, և գործիքն ընկաւ գետին:

— Ձեռքս լաւ չէի բռնացրել,—արդարացաւ Բախչին, — համ էլ՝ նաւթու էր, դուրս պըծաւ:

Ասաց և նորից բռնեց երկաթի ծայրից՝ էլի՛ անյաջող, հարկաւոր եղաւ մարդ աւելացնել, մինչև որ գործիքը որոշւած տեղը դրւեց:

— Էս ի՞նչ ծանը է եղել էս անտէրը.—առաց նա ինքն-իրեն, երբ զգաց, որ քննական աչքով իրեն եմ նայում. իսկ երբ երես շուռ տւի, հեռացաւ բակի մի ծայրը, ուր չանն էր զրւած, և համոզուելով, որ էլ տեսնել չեմ կարող, չուստը հանից ոտից, ոտը շփեց և թեկնեց չանին:

Կէս ժամից յետոյ նա նորից երեաց:

— Բախչի՛, — կանչեցի նրան:

Բախչին մօտ վագեց, այսինքն՝ աշխատում էր ըստ կարելոյն շուտափոյթ համնել, բայց չէր կարողանում, աւելի ձեռներն էր արագ շարժում, քանի թէ ոտները:

Երբ նա մօտեցաւ, կանչեցի վերև, մի առանձին սենհակ և նրան ասացի:

— Աջ ոտդ մերկացրու:

Բախչին... տարօրինակ բան. մի քայլ յետ գնաց, աչքերը չոեց և կէս-բարկացած, կէս յուզւած՝ մրմոաց.

— Ոտդ մերկացրու... ի՞նչ ունես ոտիս հետ:

— Քեզ ասում եմ՝ այս իսկ բոպէիս հանիր չուստը և գուլբագ. — բառերը հատ-հատ շեշտելով՝ կանչեցի հա:

Վճռականութիւնս ու հրամայողական տօնս ազգեցին հրամանների սովոր Բախչաւ վրայ և աջ ու ձախ նայեց, ցանկացաւ կոանալ, բայց նորից դքացաւ:

—Ախր... չը գիտեմ թէ... կակազեց նա:

—Չայնդ... նստիր ահա, այստեղ, և հանիր:

Նա գութ շարժող դէմքով մօտեցաւ աթոռին, ծայրին նստեց, և ինչոր շարունակ քթի տակ փըսփսալով՝ սկսեց ուր մերկացնել, և երբ վերջացրեց՝ ևս դարձուրած, մի կողմ ծւեցիր...

Մի ժամանակ, ըստ երեսյթին այնտեղ ուր եղել էր, իսկ այժմ... յամենայն դէպս նա ամենայն ինչ էր, բայց ոչ ոտ. կաշին քերթւած ամբողջապէս, տեղտեղ թարախոտ, բութ մատն առանց եղունգի, մի վէրքի զանգւած...

Քառորդ ժամու չափ լիզուս բռնւած, ոչինչ չէի կարողանում ասել, և նոյն իսկ չէի կարողանում որոշել այն դրութիւնը, որի մէջ ես էի գտնւում. չէի կարողանում պարզել այն վերաբերմունքը, որ ես պէտք է ցոյց տայի դէպի այդ... մարդն ասեմ, թէ ողորմելին:

—Տօ, քո գլխումդ իսկի խելք չըկայ, —վերջապէս կանչեցի, ոտդ այդպէս է, և դու բանո՞ւմ ես:

—Հապա ի՞նչ անեմ, գլխիդ դուրբան, —մրմնջաց նա, կարծես ներողութիւն ինդքելով:

—Ի՞նչպէս թէ ի՞նչ անեմ. «օրդեր» վերցրու և զնա բժշկւիր:

—Մի անգամ էլ եմ բժշկւել... լազաթը տեսայ. —պատասխանեց նա խորը թախծութեամբ:

—Ի՞նչպէս:

—Ի հարկէ: Մի ամիս բժշկւեցի, և կէս ամսւայ ոռնիկ միայն տւին: Ես էլ ասացի, —դէ որ այդպէս է բժշկւելն աւելորդ է:

— Ուրեմն դու զեռ բժշկութիւնս չը վերջացրած ես գործի կանգնել... բայց դու կատարեալ առողջացման թուղթ բերար բժշկից:

— Այս, բերայ... զօռով...

— Ի՞նչ ես խօսում տակից գլխից. ինչպէս թէ զօռով, — գարմացած հարցրի նրան:

— Կէս ամիս հիւանդանալուս համար որ չը տեին, ես էր, քեասիր մարդ եմ—գնացի բժշկի մօտ, կոփալմաղալ սարքեցի, թէ ուս բոլորովին առողջ է, թորդթը տուր, երբ տեսաւ, որ իրանից ձեռք չեմ քաշում, քննեց, դէս շուռ տւաւ, դէն շուռ տւաւ, յետոյ թուղթը գրեց, ինձ տւաւ, միայն պատեիրեց, որ մի առ ժամանակ թեթև գործեր կատարեմ:

— Իսկ ինչո՞ւ այդ մասին ինձ ոչինչ չես ասել:

— Ուզում էի պրիկաշչեկին ասել, մէկ էլ չասեցի. վախեցի գայ գանգատուի, որ բժշկին խարել եմ. ինձ համար ամօթ էր:

Ես մտածութեան տակ ընկայ. ինչո՞ւ պէտք է այդ մարդը 10 մանէթի համար իր ոտը փչացնէր. առանութի՞ւնն էր պատճառը, աշխատանք կատարելու բառն ցանկութի՞ւնը, թէ մի այլ բան:

— Լաւ, ուղիղն ասա, տեսնենք ինչո՞ւ համար դու չես ցանկացել մի երկու շաբաթ էլ զնալ հիւանդանոց ու կարգին բժշկել. չը որ ոտդ քեզ համար ոչ թէ տասը, այլ հազարաւոր բուրլիներ արժեն. կարծում եմ, դու ինքդ այդ շատ լաւ հասկանում ես:

Բախչին պատասխանի փոխարէն ինչ-որ կմկմաց, շուռ ու մուռ եկաւ, ապա ձեռքը զանդաղութեամբ դէպի ալիւրի քսակից կարած բլուզը տարաւ և ծոցից մի թուղթ հանելով՝ մեկնեց դէպի ինձ:

Նամակ էր. բաց արի կեղտոտած թուղթն ու սկսեցի կարգալ.

«Սիրելի որդի Բախչի».

«Նախ եթէ կամենաս մերոյս կողմանէ հարցանել-
փառք Աստուծոյ. սաղ և սալամաթ ենք. տացէ տէր-
թագաւորը, որ զու էլ լինիս ողջ և առողջ և գործով
աջողակ ի տէրն՝ ամէն։ Երկրորդը, սիրելի որդի, ահա
որ իմանաս, քո գնալուդ ութ ամիս է և ուղարկել ես
մեզ քառասուն մանէթ փող, որից քսանը պարտք ու
խարջ ենք տւել, մեզ մօտ մնացել է քսան մանէթ։
Այժմ երկու ամիսն անց է կացել մի կօպէկ փող չես
ուղարկել։ Հարսիդ ուները բորիկ են. գլխին շալի տեղ
քո հին չուխիդ փէջն է զցում. այծն էլ դաբաղից ըն-
կաւ ու սատկեց. մէկ-մէկ կթում էինք էլի և երեխի
համար մածում շինում այժմ էկ էլ կտրւեց։ Հիմա չեմ
իմանում ինչ անեմ. տանը մի բան չը կայ, որ ծա-
խենք, ապրենք։ Քեզ զուրբան, չասեա՝ թէ մէրս շառ
նամակ է զրում. մէրդ ջնանդամը գնայ, քո հարսիդ ու
երեխիդ դարդն եմ քաշում, որ ամեն նայելով քթիս
ծուխը մլում է։ Հարևաններումն էլ չը կայ. եթէ կայ
էլ, չէ են ասում։ Ուզում էի փողից մի քիչ պոկեմ ու
կարտօֆէլ ցանեմ, բայց հարիւր տեղից ծակ ջիրու-
մը փող կը մնայ։ Վերջն էլ ի՞նչ երկարացնեմ. որտե-
ղից որ է, մի քիչ փող ուղարկիր, գոնէ երեխին ամեն
որ ցամաք հաց հասցնենք. ձեռքից զնում է»։

Նամակի տակ էլի ինչ որ բաներ կային զրած,
բայց չուզեցի կարդալ. հոգիս ճնշում էր։ Հայեացը
զցել էի Բախչու դէմքին, և.. հէնց էնպէս, նայում էի։

—Երբ այդ նամակին ստացայ, և տեսայ, որ մի-
այն կէս օրերս են տալու, քիչ մնաց սիրաս տրաբի,
էլ դիմանալ չը կարողացայ. —սկսեց խօսել Բախչին. —
և ինչպէս դիմանայի, երկու ամիս այստեղ պարապ
մնացի. վեց ամիս է, գործի եմ անցել և ստացել եմ
110 լ., 30-ը ես եմ կերել ու հագել, քառասունը տուն-

եմ ուղարկել, մնացածն էլ էստեղ եմ մեր գիւղացիներին վաղուց պարտ եղել՝ տւել. ի՞նչ հողը տայի զլիխս, որ եարալու ոտով գործի չը կանդնէի. այս երեխիս հաց է հարկաւոր: Այ, եթէ կէս օրերս չը կտրէին... կը սպասէի, մինչև բոլորովին կառողջանայի:

Բախշին գնաց. իսկ ես մտամոլոր նըստած՝ յիշեցի վաղուց կարդացած մի գրքոյկ. այնտեղ Բախշու պէս տանջւածի մէկը զըրսից նայում է լուսոյ ճաճանչներով զարդարւած սենեակներին ու այնտեղ գւարճացողներին, և ինքն-իրեն հարցնում. — միթէ նրանք մարդ են... եթէ նրանք մարդ են, հապա ես ինչ եմ... եթէ ես էլ եմ մարդ, հապա ինչու նրանց նման չեմ...

Բախշին վխաւել է այն ժամանակ, երբ ջանք էր թափում տիրոջ հարիւրները հազարներ շինելու. վխաւեց, և այնուհետև, քանի որ հիւանդ է, էլ արժէք չունի, թող կիսով բաւականանայ, ամրողը կը ստանայ, վատ կը սովորի... երկար կը բժշկւի...

Եւ աչքիս առաջ մերկանում են Բախշու թարախու ոտները, քսակէ բլուզն ու կեզտոտ վիզը, և այնտեղ հեռու՝ տիրոջ փափուկ ոտները, թանկանոց հագուստները, կարմիր վիզն ու կրկչան ձայնը, և տարակուսութեամբ՝ ինքս ինձ հարց եմ տալիս.

— Իսկապէս՝ սրանցից ո՞րն է մարդը:



L 6 FEB 2013

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50
51
52
53
54
55
56
57
58
59
60
61
62
63
64
65
66
67
68
69
70
71
72
73
74
75
76
77
78
79
80
81
82
83
84
85
86
87
88
89
90
91
92
93
94
95
96
97
98
99
100
101
102
103
104
105
106
107
108
109
110
111
112
113
114
115
116
117
118
119
120
121
122
123
124
125
126
127
128
129
130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156
157
158
159
160
161
162
163
164
165
166
167
168
169
170
171
172
173
174
175
176
177
178
179
180
181
182
183
184
185
186
187
188
189
190
191
192
193
194
195
196
197
198
199
200
201
202
203
204
205
206
207
208
209
210
211
212
213
214
215
216
217
218
219
220
221
222
223
224
225
226
227
228
229
230
231
232
233
234
235
236
237
238
239
240
241
242
243
244
245
246
247
248
249
250
251
252
253
254
255
256
257
258
259
259
260
261
262
263
264
265
266
267
268
269
270
271
272
273
274
275
276
277
278
279
280
281
282
283
284
285
286
287
288
289
289
290
291
292
293
294
295
296
297
298
299
299
300
301
302
303
304
305
306
307
308
309
309
310
311
312
313
314
315
316
317
318
319
319
320
321
322
323
324
325
326
327
328
329
329
330
331
332
333
334
335
336
337
338
339
339
340
341
342
343
344
345
346
347
348
349
349
350
351
352
353
354
355
356
357
358
359
359
360
361
362
363
364
365
366
367
368
369
369
370
371
372
373
374
375
376
377
378
379
379
380
381
382
383
384
385
386
387
388
389
389
390
391
392
393
394
395
396
397
398
399
399
400
401
402
403
404
405
406
407
408
409
409
410
411
412
413
414
415
416
417
418
419
419
420
421
422
423
424
425
426
427
428
429
429
430
431
432
433
434
435
436
437
438
439
439
440
441
442
443
444
445
446
447
448
449
449
450
451
452
453
454
455
456
457
458
459
459
460
461
462
463
464
465
466
467
468
469
469
470
471
472
473
474
475
476
477
478
479
479
480
481
482
483
484
485
486
487
488
489
489
490
491
492
493
494
495
496
497
498
499
499
500
501
502
503
504
505
506
507
508
509
509
510
511
512
513
514
515
516
517
518
519
519
520
521
522
523
524
525
526
527
528
529
529
530
531
532
533
534
535
536
537
538
539
539
540
541
542
543
544
545
546
547
548
549
549
550
551
552
553
554
555
556
557
558
559
559
560
561
562
563
564
565
566
567
568
569
569
570
571
572
573
574
575
576
577
578
579
579
580
581
582
583
584
585
586
587
588
589
589
590
591
592
593
594
595
596
597
598
599
599
600
601
602
603
604
605
606
607
608
609
609
610
611
612
613
614
615
616
617
618
619
619
620
621
622
623
624
625
626
627
628
629
629
630
631
632
633
634
635
636
637
638
639
639
640
641
642
643
644
645
646
647
648
649
649
650
651
652
653
654
655
656
657
658
659
659
660
661
662
663
664
665
666
667
668
669
669
670
671
672
673
674
675
676
677
678
679
679
680
681
682
683
684
685
686
687
688
689
689
690
691
692
693
694
695
696
697
698
699
699
700
701
702
703
704
705
706
707
708
709
709
710
711
712
713
714
715
716
717
718
719
719
720
721
722
723
724
725
726
727
728
729
729
730
731
732
733
734
735
736
737
738
739
739
740
741
742
743
744
745
746
747
748
749
749
750
751
752
753
754
755
756
757
758
759
759
760
761
762
763
764
765
766
767
768
769
769
770
771
772
773
774
775
776
777
778
779
779
780
781
782
783
784
785
786
787
788
789
789
790
791
792
793
794
795
796
797
798
799
799
800
801
802
803
804
805
806
807
808
809
809
810
811
812
813
814
815
816
817
818
819
819
820
821
822
823
824
825
826
827
828
829
829
830
831
832
833
834
835
836
837
838
839
839
840
841
842
843
844
845
846
847
848
849
849
850
851
852
853
854
855
856
857
858
859
859
860
861
862
863
864
865
866
867
868
869
869
870
871
872
873
874
875
876
877
878
879
879
880
881
882
883
884
885
886
887
888
889
889
890
891
892
893
894
895
896
897
898
899
899
900
901
902
903
904
905
906
907
908
909
909
910
911
912
913
914
915
916
917
918
919
919
920
921
922
923
924
925
926
927
928
929
929
930
931
932
933
934
935
936
937
938
939
939
940
941
942
943
944
945
946
947
948
949
949
950
951
952
953
954
955
956
957
958
959
959
960
961
962
963
964
965
966
967
968
969
969
970
971
972
973
974
975
976
977
978
979
979
980
981
982
983
984
985
986
987
988
989
989
990
991
992
993
994
995
996
997
998
999
999
1000

